13 պատարագըն զամենայն եկեղեցիքս Շ[ա]-
14 պհկանն մատուցնել։ Եւ որ այս վճռիս հ[ա]-
15 կառ կա՝ ի փառաց որդոյն Ա̅յ ուրոշե(ա)լ է։

Ծանոթություն.— 1. Դիոսկորոսը հայրապետ է կոչվել երբեմն հայոց կաթողիկոս լինելու պատճառով։ Ըստ երևույթին նա 1039 թվականին, վտարվելով կաթողիկոսական աթոռից, Սանահին է տեղափոխվել և այնտեղ շարունակել է կրել այդ անունը մինչև իր մահը, որ հավանաբար տեղի է ունեցել 1063 թվականից հետո, թեև վիմական արձանագրությունների մեջ հաջորդ վանահայրը հիշատակված է շատ ուշ, միայն 11-րդ դարի վերջին քառորդում։ Սանահինը մայր քաղաք է կոչվել այս արձանագրության մեջ միայն այն պատճառով, որ նա համարվել է կաթողիկոսանիստ վայր։



Նկ. 67. Արձ. №№ 106 և 107։

2. զԱւգկատ[ա]փ տեղանունը կասկածելի է, առաջին երեք գրերը ծեծկված ու փշրված են. կարող է լինել զԱւռնակատափ։

Տարընթերցում.— 1. Երրորդ տողում Շապուհիկս անձնանունը Ջալ, որից Վիմ գրել են Շապուհ, Կրիմ Շապուհս։

2. Ջալ, Հար զԱւգկատափ կարդացել են զԱւրնակատափ (զՈռնակայ տափ)։

3. 14-րդ տողում Շապհկանն մատուցնել Կրիմ կարդացել է՝ Շապուհի համկանն առնել։

## IX ԳՐԱՏՈՒՆ

### 106. Գրատան մուտքի սլաքավոր կամարին

(Լուս. № 67)

ԺԳ դար